ՊԵՏՔԻՄՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՐՔԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N << ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/9-17/1>>

Երևան

<<10>> մայիսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմն ի դեմս աշխատակազմի ղեկավար **Արմեն Գևորգյանի**, որը գործում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, **<ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ> ՍՊԸ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Գալստյանի** (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«սարքերի արդիականացման ծառայությունների»** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը ընդունվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5(հինգ) օրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ծառայությունը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 3.2-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **4819000 (չորս միլիոն ութ հարյուր տասնինը հազար) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան **25.12.2017թ.**:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը, բայց ոչ ուշ քան **25.12.2017թ.**:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն՝ ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է **4(չորս)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ	**<ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ> ՍՊԸ**
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8	**Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 5**
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	**«Ամերիաբանկ» ՓԲԸ**
Հ/Հ 900011194157	**Հ/Հ՝ 1570017535970100**
ՀՎՀՀ 02506264	**ՀՎՀՀ 00127455**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
<< 10>> մայիսի 2017թ. կնքված
N << ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/9-17/1>> գնման պայմանագրի

"

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Մատուցվող ծառայության անվանումը	Մատուցվող ծառայության ընթացքում տեղադրվող սարքերի քանակը /հատ/	Տեխնիկական բնութագիր	Ծառայության գինը /ՀՀ դրամ/
1	2	3	4	5	6	
1	**Սարքերի արդիականացման ծառայություններ**	դրամ	Controller SAS for DELL (PCx) PERC H800 1GB NV սարքի **(1 հատ)** տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքի արժեքը	1	Controller SAS for DELL (PCx) PERC H800 1GB NV: PCI-Express Gen3.0 support & 12Gb/s SAS (SAS 3.0) host interface, Low-Profile. Support for RAID levels 0, 1, 5, 6, 10, 50 and 60. PCI-Express Gen 2.0 support 6Gb/s SAS (SAS 2.0) host interface Doubles throughput performance capability over 3Gb/s models Max hard drive support: 192 drives Backwards-compatible with 3Gb/s SAS (SAS 1.0) drives 1 GB NV cache module Support for individual (logical) hard drives greater than 2TB Support for self-encrypting hard drives (SED) Support for solid-state drives (SSD) կամ համարժեք սարքերի տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքերի արժեքը:	180000
			UPS APC 3000 Battery (RBC 43) սարքի **(3 հատ)** տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքի արժեքը	3	UPS APC 3000 Battery (RBC 43): Battery type Maintenance-free sealed Lead-Acid battery with suspended electrolyte : leakproofBattery mounting Enclosed battery cartridgeExpected Battery Life (years) 3 - 5RBC Quantity 1Battery Volt-Amp-Hour Capacity 480 Physical կամ համարժեք սարքերի տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքերի արժեքը: Առավելագույն բարձրությունը 3.0 դյույմ (76mm , 7.6cm) առավելագույն Լայնությունը 8.5 դյույմ (216mm , 21.6cm) առավելագույն խորությունը 21.0 դյույմ (533mm , 53.3cm), քաշ 42.0lbs. (19.09kg)	294000

					Աշխատանքային միջավայր 0 - 40 °C, Հարաբերական աշխատանքային խոնավություն 0 - 95 %, շահագործման բարձրության պայմաններ 0-3000meters, Պահպանման ջերմաստիճանը -15 - 45 °C երաշխիք 1 տարի	
			UPS APC Smart RT5000 Battery (RBC 44) սարքի **(4 հատ)** տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքի արժեքը	4	UPS APC Smart RT5000 Battery (RBC 44): Battery type Maintenance-free sealed Lead-Acid battery with suspended electrolyte : leakproofBattery mounting Enclosed battery cartridgeExpected Battery Life (years) 3 - 5 Replacement battery cartridge note Each RBC44 consists of 2 battery modules.RBC Quantity 1Battery Volt-Amp-Hour Capacity 960 Operating Environment 0 - 40 °C Operating Relative Humidity 0 - 95 % Operating Elevation 0-3000metersStorage Temperature -15 - 45 °C Storage Relative Humidity 0 - 95 % Storage Elevation 0-15000meters կամ համարժեք սարքերի տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքերի արժեքը:	608000
			SAS cable DELL SFF-8088 (external miniSAS, 26 pin miniSAS) սարքի **(2 հատ)** տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքի արժեքը	2	SAS cable DELL SFF-8088 (external miniSAS, 26 pin miniSAS) կամ համարժեք սարքերի տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքերի արժեքը:	66000
			PowerSuply 500W ATX PC սարքի **(20 հատ)** տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքի արժեքը	20	PowerSuply 500W ATX PC կամ համարժեք սարքերի տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքերի արժեքը: 12cm հովհար օդափոխության համր ցածր աղմուկով: 24 փին կոնեկտոր (20 + 4): 4-pin 12V; 3 x SATA. 2 x 4 փին . 1 x անգործունյա. Կաբելների երկարությունը: 38.5սմ (15 դյույմ) Intel v2.03 ստանդարտ, ուժեղացված + 12V, անջատման կոճակ ետեվի մասում Over լարման եւ ընթացիկ պահպանության + 3.3V + 5V + 12V, արդյունավետություն> 70%; Բարցր լարման պաշտպանության (OVP), Հոսանքի պաշտպանություն (OPP), ավելի ջերմաստիճանի պաշտպանության (OTP) եւ կարճ միացում պաշտպանությունը (SCP)	98000
			HDD Sata 500GB 7200rpm սարքի **(5 հատ)**	5	կոշտ սկավառակ HDD Sata 500 GB 7200rpm 32MB SATA ինտերֆեյս 6Gb/s 3.5" ներքին տեղադրման կամ համարժեք սարքերի տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքերի արժեքը:	160000

			տեղադրման ծառայություն ներ՝ ներառյալ տեղադրվող սարքի արժեքը			
			HDD sata 1TB 7200 prm սարքի **(3 հատ)** տեղադրման ծառայություն ներ՝ ներառյալ տեղադրվող սարքի արժեքը	3	Կոշտ սկավառակ HDD sata 1TB 7200rpm 64 MB SATA ինտերֆեյս 6Gb/s 3.5" ներքին տեղադրման կամ համարժեք սարքերի տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքերի արժեքը:	126000
			Cat 5E UTP LAN cable Copper Solid 305M սարքի **(1 հատ)** տեղադրման ծառայություն ներ՝ ներառյալ տեղադրվող սարքի արժեքը	1	HyperLine Cat 5E UTP LAN cable Copper Solid 305M կամ համարժեք սարքերի տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքերի արժեքը:	45000
			Cat 6E UTP LAN cable Copper Solid 305M սարքի **(1 հատ)** տեղադրման ծառայություն ներ՝ ներառյալ տեղադրվող սարքի արժեքը	1	HyperLine Cat 6E UTP LAN cable Copper Solid 305M կամ համարժեք սարքերի տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքերի արժեքը:	78000
			Connector cat5 RJ45 սարքի **(500 հատ)** տեղադրման ծառայություն ներ՝ ներառյալ տեղադրվող սարքի արժեքը	500	Connector RJ45 cat5 HyperLine կամ համարժեք սարքերի տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքերի արժեքը:	40000
			Connector cat6 RJ45 սարքի **(500 հատ)** տեղադրման ծառայություն ներ՝ ներառյալ տեղադրվող	300	Connector RJ45 cat6 HyperLine կամ համարժեք սարքերի տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքերի արժեքը:	45000

			սարքի արժեքը			
			Swich HP 2530-48G սարքի (1 հատ) տեղադրման ծառայություն ներ՝ ներառյալ տեղադրվող սարքի արժեքը	1	HP J9775A 2530 Series Blade System Network Switch Module (J9775A) կամ համարժեք սարքերի տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքերի արժեքը:	213000
			HP Mini-GBIC Gigabit-SX-LC SFP (J4858C) սարքի (8 հատ) տեղադրման ծառայություն ներ՝ ներառյալ տեղադրվող սարքի արժեքը	8	Արտադրող- Hp, մոդուլ տեսակը- SFP (miniGBIC), պորտերի քանակը - 1 , ցանցի ինտերֆեյսը- 1000Base-SX , Օպտիկական մանրաթելեր տիպը - Մուլտիմոդալ, կոնեկտորների տեսակը - LC ,սնուցում- 3,3 վոլտ, Համատեղ- ProCurve 2610 2900, ProCurve 1400, 1700, 1800, 2510, 2600, 2810, 2824/2848, 3400cl, 3500yl, 4200vl, 5300xl, 5400zl. 6108 Switch, 6200yl Switch series. 8200zl, 9300m Routing Switch series կամ համարժեք սարքերի տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքերի արժեքը: Չափերը: 10.5x6x2.5	256000
			Multimod Patch Cord 3m սարքի (2 հատ) տեղադրման ծառայություն ներ՝ ներառյալ տեղադրվող սարքի արժեքը	2	Multimod Patch Cord 3m, LC տեակի մանրաթելային կոմուտացման լար Մուլտիմոդ երկարությունը 3 մետր կամ համարժեք սարքերի տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքերի արժեքը:	24000
			Strip Length RJ45/RJ11 HyperLine սարքի (1 հատ) տեղադրման ծառայություն ներ՝ ներառյալ տեղադրվող սարքի արժեքը	1	HyperLine HT-500 RJ-45, RJ-12, RJ-11 (8P8C, 6P6C, 4P4C) կամ համարժեք սարքերի տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքերի արժեքը:	16000
			VGA Cabel 1,8 m սարքի (10 հատ) տեղադրման ծառայություն ներ՝ ներառյալ տեղադրվող սարքի արժեքը	10	VGA Cabel 1,8 m, Տիպ - VGA, կաբելի երկարությունը-1.8 մետր, միացման տեսակը - VGA 15 «M» - VGA 15 «M» կամ համարժեք սարքերի տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքերի արժեքը:	22000

			Panasonic MCLS 6178 սարքի **(1 հատ)** տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքերի արժեքը	1	Panasonic MCLS 6178 կամ համարժեք սարքերի տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքերի արժեքը: Համատեղելի KX-TDE600 եւ KX-TDA600 Panasonic հեռախոսակայաների համար. 24 պորտ , 24-պորտ անալոգային զծի քարտ, Caller ID, անալոգային սարքի միացման հնարավորություն, 16 DTMF Receivers, 6 պորտ աշխատող առանց էլեկտրաէներգիայի	178000
			ESET NOD32 Antivirus Business Edition newsale for 250 user համակարգչային հակավիրուսային ծրագրի **(1 հատ)** տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող ծրագրի արժեքը	1	ESET NOD32 Antivirus Business Edition newsale for 250 user կամ համարժեք համակարգչային հակավիրուսային ծրագրի տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող ծրագրի արժեքը:	1730000
			Mikrotik CRS226-24G-2S սարքի **(1 հատ)** տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքի արժեքը	1	Mikrotik CRS226-24G-2S կամ համարժեք սարքերի տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքերի արժեքը: CRS226-24G-2S+RM Qualcomm Atheros QCA8519 400MHz 64MB 128MB NAND 24x 10/100/1000Mbit/s Gigabit Ethernet	135000
			PowerEdge 1081AD սարքի **(1 հատ)** տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքի արժեքը	1	Dell PowerEdge KVM 1081AD 1081 AD 8 Port IP Remote Server Console Switch. Local Ports Dual independent local port video paths (1 dedicated to ACI for tiering). Server Ports 8 ports for connections to servers, up to 4 x USB 2.0 ports. SIPs Multi-platform support for PS/2, USB, USB 2.0. Switch Access Agentless control and access for 1 remote user with Remote Key (Not included). Management OSCAR On-Screen Display for local Access. Rack Mount Kit - Included, Video Support Condition Analog VGA, SVGA, and XGA, 16:10 widescreen, up to 1680 x 1050 կամ համարժեք սարքերի տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքերի արժեքը:	380000
			Pach Cord 6e Nexans 2m սարքի **(50 հատ)** տեղադրման	50	Pach Cord 6e Nexans 2m կամ համարժեք սարքերի տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքերի արժեքը:	50000

			ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքի արժեքը		Essential-6 Patch Cord UTP Cat 6 LSZH Orange 2m	
			Pach Cord 6e Nexans 3m սարքի **(50 հատ)** տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքի արժեքը	50	Pach Cord 6e Nexans 3m կամ համարժեք սարքերի տեղադրման ծառայություններ՝ ներառյալ տեղադրվող սարքերի արժեքը: Essential-6 Patch Cord UTP Cat 6 LSZH Orange 3m	75000
Ընդամենը՝						**4 819 000 (չորս միլիոն ութ հարյուր տասնինը հազար)**
Ծառայությունների մատուցման ժամանակացույց						
Սկիզբ՝ պայմանագրի կնքման օր:					Ավարտ՝ 15.05.2017թ.	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011194157
ՀՎՀՀ 02506264

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 5
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570017535970100
ՀՎՀՀ 00127455

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
<< 10>> մայիսի 2017թ. կնքված
N << ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/9-17/1>> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2017թ. պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	**Սարքերի արդիականացման ծառայություններ**	-	-	-	-	**4819000**	**4819000**	**4819000**	**4819000**	**4819000**	**4819000**	**4819000**	**4819000**	**4 819 000 (չորս միլիոն ութ հարյուր տասնինը հազար)**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով՝ ՀՀ դրամով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011194157
ՀՎՀՀ 02506264

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

<ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 5
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570017535970100
ՀՎՀՀ 00127455

(ստորագրություն)

Հավելված 3
<< 10>> մայիսի 2017թ. կնքված
N << ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/9-17/1>> գնման պայմանագրի

Պատվիրատու

ՀՀ արդարադատության նախարարության
աշխատակազմ
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011194157
ՀՎՀՀ 02506264

Պայմանագրի կողմ

<ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 5
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ՝ 1570017535970100

ՀՎՀՀ 00127455

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ պետության կարիքների համար սարքերի արդիականացման ծառայությունների մատուցում
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ **«10» «մայիսի» 2017թ.**
Պայմանագրի համարը՝ **ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/9-17/1**

Պատվիրատուն՝ ի դեմս Արմեն Գևորգյանի և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
<< 10>> մայիսի 2017թ. կնքված
N << ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/9-17/1>> գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ **Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության** աշխատակազմի(այսուհետ՝ Պատվիրատու) և **<ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ> ՍՊԸ-ի** (այսուհետ՝ Կատարող) միջև 2017թ. մարտի « » -ին կնքված << **ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/9-17/1>>** գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N **ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/9-17/1**

(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան << 10 >> **մայիսի** 2017թ.

<ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Գալստյանի (ВА1578714/06,11,2014/008), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է **ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ << **սարքերի արդիականացման ծառայությունների** >>* ձեռքբերման << **ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/9-17/1** >>* ծածկագրով ՇՀ** գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը՝ **<ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ> ՍՊԸ**

Հասցեն՝ **ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 5**

Սպասարկող բանկի անվանումը **«Ամերիաբանկ» ՓԲԸ**

Հ/Հ՝ **1570017535970100**

ՀՎՀՀ **00127455**

տնօրեն՝ ----------

(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ ----------

(ստորագրություն)

Կ.Տ

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[2] N ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/9-17/1**

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" _____ 2017թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ **<ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ> ՍՊԸ**

4. Վճարողի բանկը՝ **«Ամերիաբանկ» ՓԲԸ**

5. Վճարողի հաշվի համարը՝ **1570017535970100**

6. Վճարողի ՀՎՀՀ՝ **00127455**

7. Վճարողի ՀԾՀ՝ **5412830102**

8. Շահառու՝ **ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ**

9. Շահառուի ՀՎՀՀ՝ **02506264**

10. Շահառուի բանկը՝ **Կենտրոնական գանձապետարան**

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ **900005000758**

12. Գումարը թվերով և բառերով՝ **481900 (չորս հարյուր ութսունմեկ հազար ինը հարյուր)**

13. Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ**

14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ թիվ **ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/9-17/1 պայմանագրի ապահովում**

15. Պայմանագրի ծածկագիրը՝ **ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/9-17/1**

16. Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ 19.բ. Կ.S.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ 18.բ. Կ.S.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.S. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.S. 22. Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[2] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*